ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«02» 02 2019թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 07

Ձեռնարկողը՝ ***<<ԵՊՀ շրջանավարտների միավորում>> ՀԿ***
Ք. Երևան, Ալեք Մանուկյան 1

Գործունեությունը՝ ***Մոնթե Մելքոնյան փողոցին հարակից տարածքում նախատեսվող <<Վերածնունդ>> երիտասարդական ավանի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվություն***
ք. Երևան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Ռ. Ոսկանյան

Առդիր եզրակացությունը՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 07

«22» 02 2019թ.

<<ԵՊՀ շրջանավարտների միավորում>> հասարակական կազմակերպության կողմից Երևան քաղաքի Մալաթիա Սեբաստիա վարչական շրջանի Մոնթե Մելքոնյան փողոցին հարակից տարածքում նախատեսվող <<Վերածնունդ>> երիտասարդական ավանի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվություն

Պատվիրատու՝	<<ԵՊՀ շրջանավարտների միավորում>> ՀԿ
Ներկայացված նյութեր՝	Հիմնադրույթային փաստաթուղթ
Գտնվելու վայրը՝	ք. Երևան, Մալաթիա Սեբաստիա շրջան

Համաձայն ներկայացված ծրագրային փաստաթղթի Երևան քաղաքի Մալաթիա Սեբաստիա վարչական շրջանի Մոնթե Մելքոնյան փողոցին հարակից տարածքում, շուրջ 6,57 հեկտար մակերեսով հողամասում, բնակարանային ապահովության սոցիալ-ներդրումային ծրագրի շրջանակներում նախատեսվում է <<Վերածնունդ>> երիտասարդական ավանի կառուցում:

Տարածքը ամայի է, այստեղ չկա որևէ շինություն: Տարածքի անմիջական հարևանությամբ անցնում են Ծիծեռնակաբերդի խճուղի, Լենինգրադյան և Մոնթե Մելքոնյան փողոցները, որոնք կառուցապատված են հիմնականում բազմաբնակարանային շենքերով:

Ավանը կունենա շուրջ 1000 բնակարաններ, կանաչապատ հանգստի գոտիներ, մանկապարտեզ, կենցաղ-սպասարկման և հասարակական նշանակության տարածքներ:

Վերածնունդ ավանի ծրագրային փաստաթուղթը մշակվել է հաշվի առնելով ՀՀ Կառավարության 01.03.2014թ. «Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման մասին» N442-Ն, 29.07.2016 «Հայաստանի Հանրապետության 2016-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին» 64-Ն որոշման և Երևանի գլխավոր հատակագծի դրույթները և պահանջները:

Ավանի կառուցման փաստաթուղթը մշակված է համաձայն Երևանի քաղաքապետի կողմից 23/07/2018թ. համաձայնեցված N01/18-07/2-53967-553 ճարտարապետահատակագծային առաջադրանքի:

Ծրագրի իրականացման համար հիմք է հանդիսացել ՀՀ կառավարության 22/03/2018թ. <<Ներդրումային ծրագրին հավանություն տալու և <<Երևանի պետական համալսարանի շրջանավարտների միավորում>> հասարակական կազմակերպությանը հողամաս օտարելու մասին>> h 308-Ա որոշումը:

Երիտասարդ ընտանիքների և մասնավորապես Երևանի պետական համալսրանի շրջանավարտների բնակարանային ապահովման խնդիրը լուծելու համար քննարկվել են մի քանի տարբերակ, այդ թվում զրոյական:

Զրոյական տարբերակ նշանակում է, որ երիտասարդ ընտանիքների բնակարանային ապահովման համար որևէ ծրագիր չի իրականացվում:

Այդ դեպքում "Վերածնունդ" ավանը չի կառուցվում, նախատեսվող հողամասը չի օգտագործվում և մնում է գոյություն ունեցող ամայի վիճակում:

Զրոյական տարբերակի դեպքում չեն լինի շինարարական աշխատանքների ժամանակ առաջացող աղմուկը, փոշու և վառելիքի այրման արգասիքների արտանետումներ, չի վնասվի տարածքի բերրի հողաշերտը:

Բնակիչները, որոնք կբնակվեն "Վերածնունդ" ավանում բոլոր դեպքերում օգտագործում են ջուր, նրանց ապրելավայրում առաջանում է կենցաղային աղբ, կեչտաջրեր, նրանք օգտվում են տրանսպորտային միջոցներով:

Սա նշանակում է, որ ավանի շահագործումը չի առաջացնի լրացուցիչ բեռ շրջակա միջավայրի վրա:

Ծրագրից հրաժարվելը թույլ չի տա լուծել շատ լուրջ սոցիալական խնդիր՝ զգալիորեն նվազեցնել բնակարանների գինը, ինչը երիտասարդ ընտանիքների համար մեծ օգնություն կլինի:

Շինարարական աշխատանքներն իրականացնելու համար նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

- Նախքան շինարական հրապարակում աշխատանքներ կատարելը պետք է համապատասխան կազմակերպություններից պարզել տարածքում կոմունիկացիաների առկայությունը:
- Նախապատրաստել շինարարական հրապարակի տարածքը և ապահովել անխափան մուտք դեպի տարածք:
- Տարածքը աղբից մաքրում:
- Բոլոր շինությունների հիմքի տարածքներից բուսաշերտի հանում:

Նախագծային պահանջներից ելնելով բնակելի շենքերի համար թույլատրելի բարձրությունը ընտրվել է մինչև 18 հարկ:

Փաստաթղթի մշակման նախապայմաններն են.

- թաղամասի կառուցապատման ծավալատարածական հորինվածքը ներդաշնակեցնել տարածքի լանդշաֆտային առանձնահատկություններին:
- թաղամասի տարածքում նախատեսել անհրաժեշտ ապասարելման հաստատություններ՝ հասարակական սննդի առևտրի կենցաղային սպասարկման, մարզական և այլն,

- ներթաղային ճանապարհային ցանցը և շենքերի կառուցապատման կարմիր գծերի սահմանները նախագծել նորմատիվային պահանջներին համապատասխան,
- լուծել դեպի թաղամասի տարածք ավտոտրանսպորտի անվտանգ ելումուտի, շենքերի և շինությունների սպասարկման խնդիրները, նախագծվող շենքերը ապահովել վերգետնյա և ստորգետնյա ավտոկայանատեղերով,
- ռելիեֆային անկմամբ պայմանավորված՝ թաղամասում նախագծվող շենքերի և շինությունների տանիքների տեսողական առանձնահատկությունները հաշվի առնելով՝ հատուկ ուշադրություն դարձնել տանիքներին՝ նախատեսելով նյութի և գույնի միասնական, համահունչ լուծումներ, ինժեներական սարքավորումներ տեղադրելու պարագայում դրանք քողարկել համապատասխան ճարտարապետական լուծումներով,
- թաղամասի ճանապարհային ցանցը նախագծել հաշվի առնելով հարևան հողամասերի հետագա կառուցապատման զարգացումը,
- նախագծման ժամանակ հաշվի առնել Երևանի քաղաքապետին կից քաղաքաշինական, բնապահպանական, հաղորդակցության և տրանսպորտի խորհրդում հնչեցրած առաջարկություններն ու դիտողությունները,
- նախագծվող շենքերում նախատեսել ստորգետնյա հարկեր,
- կազմակերպել ջրահեռացում,
- բարեկարգել տարածքը:

Ավանում նախատեսվում է 1000 բնակարան: Հաշվի առնելով, որ ավանը նախատեսված է երիտասար ընտանիքների համար յուրաքանչյուր բնակարանի բնակիչների միջին թիվը ընդունվում է 4 հոգի, ընդամենը ավանի բնակչությունը կկազմի 4000 մարդ: Ընդունելով յուրաքանչյուր բնակչի ջրասպառման նորմը՝ 250լ/օր, ընդհանուր ջրապահանջը կկազմի՝ 365000 մ³/տարի:

Ներկա դրությամբ դժվար է գնահատել սպասարկող օբյեկտների ջրապահանջը, և մոտավոր հաշվարկների համար ընդունվում է ընդհանուր ջրապահանջի 20 տոկոսը: Այսպիսով ընդհանուր ջրապահանջը կկազմի՝ 438000 մ³/տարի: Ջրահեռացումը հաշվարկվել է՝ 416100 մ³/տարի:

Ջրառը նախատեսվում է իրականացնել Լենինգրադյան փողոցով անցնող քաղաքային ջրատարից, կոյուղին կմիացվի նույնպես Լենինգրադյան փողոցով անցնող քաղաքային կոյուղատարին:

Ընդունելով մեկ բնակչի համար աղբի առաջացման նորմը՝ 3.2 մ³/տարի, կստանանք՝ 12800 մ³/տարի:

Նույն հիմնավորմամբ ընդունելով, որ սպասարկող կազմակերպություններում կառաջանա մոտավորապես 20 տոկոս աղբ, ընդամենը աղբի հաշվարկային ծավալը կկազմի՝ 15360 մ³/տարի: Տարածքը նախատեսում է բարեկարգել և կանաչապատել:

Փորձաքննական եզրահանգումներ. Հիմնադրույթային փաստաթղթում դիտարկվել են միջոցառումներ շրջակա միջավայրի պահպանության արդյունավետ կազմակերպման համար, համալիր կերպով գնահատվել են առկա բնապահպանական խնդիրները, գոյություն ունեցող իրավիճակը և ընտրվել զարգացման այնպիսի սցենարներ, որոնց միջոցով հնարավոր կլինի ներդաշնակորեն լուծել սոցիալական, տնտեսական և բնապահպանական խնդիրները:

Փորձաքննական պահանջներ

- Օրենսդրությամբ սահմանված կարգով մշակել գործունեության տարածքի կանաչապատման և բարեկարգման նախագիծը՝ համաձայնացնելով Երևանի քաղաքապետարանի հետ:
- Հիմնադրութային փաստաթղթի շրջանակներում նախատեսվող գործունեությունների նախագծային փաստաթղթերը՝ <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքով սահմանված դեպքերում. մինչև իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել բնապահպանության նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<ԵՊՀ շրջանավարտների միավորում>> հասարակական կազմակերպության կողմից Երևան քաղաքի Մալաթիա Սեբաստիա վարչական շրջանի Մոնթե Մելքոնյան փողոցին հարակից տարածքում նախատեսվող <<Վերածնունդ>> երիտասարդական ավանի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն:

Տնօրենի տեղակալ Ա. Դոնոյան

Մասնագետ Զ. Զուռնաչյան